ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 1962—1986 ԹԹ.

Ա. Մ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական սփյուռքը, որ մի հարափոփոխ դինամիկ ամբողջություն է, աշխարհի տարբեր մասերում կատարվող ռազմական անցուդարձերի, ինչպես նաև քաղաքական, սոցիալ-տնտեսական ու էթնիկական պրոցեսների հետևանքով վերջին քառորդ դարի ընթացքում զգալիորեն փոխել է իր կերպարանքը։ Տարեցտարի ավելի ու ավելի սակավամարդ են դառնում Մերձավոր ու Միջին արևելքի հայկական հին գաղթօջախները, որոնց բնակչության հաշվին հայկական համայնքներ են ստեղծվում նոր երկրներում կամ զգալիորեն մեծանում է ուրիշ երկրների հայ բնակչության թիվը[1]։ Տեղաշարժերի այս ընդհանուր տենդենցը շարունակվում է առ այսօր։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ստորև օգտագործելու ենք միայն մամուլում և գրականության մեջ տպագրված տվյալները, մի կողմ թողնելով մնացած բոլոր տեսակի տեղեկությունները։ Եթե մեր ձեռքի տակ եղած տպագիր աղբյուրների՝ նույն երկրին և նույն տարվան վերաբերող տվյալները տարբերվում են միմյանցից, հասկանալի պատճառներով ցույց ենք տվել ավելի մեծ թվերը, ըստ որում, պաշտոնական վիճակագրությունների համարյա իսպառ բացակայության պայմաններում, գոյություն ունեցող բոլոր թվական տվյալները մոտավոր են և թեական։

Ինչպես պարբերական մամուլում, այնպես էլ գրականության մեջ, որպես կանոն, բացակայում են տեղեկություններն այն մասին, թե ինչ աղբյուրներից են քաղված այս կամ այն երկրի հայկական համայնքի թվաքանակին վերաբերող տեղեկությունները։

Հաշվի առնելով վերջին քառորդ դարի ընթացքում (նաև ներկա ժամանակներում) կատարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ եղելությունները, մի շարք դեպքերում ստիպված ենք չհավատալ մամուլում կամ գրականության մեջ բերվող տարեցտարի ու աղբյուրից աղբյուր կրկնվող թվերին։

Ափսոսանքով պետք է արձանագրել, որ սփյուռքահայության տեղաշարժերի դինամիկան պարզելու գործը հաճախ անհնար է դառնում այն պատճառով, որ ոչ բոլոր երկրների համար կան տարբեր տարիների վերաբերող թվական տվյալներ, որոնք կարելի կլիներ համեմատել։ Ավելին, շատ դեպքերում այս կամ այն երկրի հայկական համայնքի թվական կազմի վերաբերյալ կա ընդամենը 1—2 տվյալ։ Բացի այդ, որոշ աղբյուրներում մեկից ավելի երկրների տվյալները միացված են իրար և տրված են մեկ թվով (օր.՝ «Սկանդինավյան երկրներ»), մինչդեռ այլ աղբյուրներում նման ձևով միավորված երկրների խմբեր չկան։

Մեր ձեռքի տակ եղած ավելի քան 4 տասնյակ աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ 5 և ավելի աղբյուրներ տեղեկություններ են պարունակում հետևյալ երկրների հայկական համայնքների՝ տարբեր տարիների թվական կազմի վերաբերյալ.

1. Անգլիա	— 8	աղբյուր	7. Հոլանդիա	— 6	աղբյուր
2. Ավստրիա	— 6	»	8. Հունաստան	—13	»
3. Բելգիա	— 6	»	9. Շվեյցարիա	— 7	»
4. Բուլղարիա	—10	»	10. Ռումինիա	—10	»
5. ԳՖՀ	— 6	»	11. Ֆրանսիա	—17	»
6. Իտալիա	— 9	»	12. Թուրքիա	—19	»

[1] Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1985, № 9, էջ 47—51։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ / ԵՐԿՐՆԵՐ	Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ԱՅՍՕՐ, ԵՐԵՎԱՆ	Վ.Լ. ՊԱՊԱԶՅԱՆ - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ և ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ. ԵՐԵՎԱՆ	„ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ", №1, „ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ", էջ 197	"БОЛЬШАЯ СОВЕТСКАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ", т.2, "АРМЯНЕ"	„ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ", №1, „ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ", էջ 277-278	Г.А. ШПАЖНИКОВ - РЕЛИГИИ СТРАН ЗАПАДНОЙ АЗИИ, М.	„ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ", ՀԱՏ. 6, „ՀԱՅԵՐ", էջ 157-158	ՆՈՐԱՅՐ ՏԵՂՈՒՆՑ, „ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐ", էջ 171-178	Վ.Ե. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ և ՍՓՅՈՒՌՔԸ. ԵՐԵՎԱՆ	Ա.Մ. ՈՍԿԱՆՅԱՆ - ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՔԱՐՏԵԶ. ԵՐԵՎԱՆ	С.И. БРУК - НАСЕЛЕНИЕ МИРА. ЭТНО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ СПРАВОЧНИК. М.	ՄԻՀՐԱՆ Ք.-ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ, „ԱԶԳ ՕՐ" ԹԵՐԹ, ԱԹԵՆՔ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, № 11454	„ՄԱՐՏ" ԹԵՐԹ, ՓԱՐԻԶ, 21 ՀՈՒԼԻՍԻ	Beatrice Kasbarian-Bricout, Les Armeniens au xxe siecle. L' Harmattan, Paris	Laurent et Annie Chabry, Politique et minorites au Proche-Orient, Paris, Ed. Maisonneuve-Larose	ՏԱՐԵԳԻՐՔ Le reflet de la communoté Armeniene de Montneal, Annuale commerciale Armeniene, Montreal, 1984/5.	Ա.Մ. ՈՍԿԱՆՅԱՆ - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ. „ԼՐԱԲԵՐ", ՀԱՅ. ԳԱՏ., №9, էջ 47-51	„ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ", ՀԱՏ. 11, „ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ", էջ 216-219	С.И. БРУК - НАСЕЛЕНИЕ МИРА. ЭТНО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ СПРАВОЧНИК, II ИЗД., М.
	1962	1967	1967	1970	1973	1976	1980	1980	1980	1980	1981[3]	1983	1983	1984	1984	1984/85	1985	1985/86	1986[3]
ԱՆԳԼԻԱ	3,0[1]	-	-	-	5,0	-	16,0	-	11,0	16,0	-	-	10,0	-	-	26,0	17,0	17,0	15,0
ԲՈՒԼՂԱՐԻԱ	25,0	37,0	25,0	-	25,0	-	25,0	-	27,0	27,0	20,0	-	-	25,0	-	26,0	25,0	25,0	-
ԳՖՀ	-	-	-	-	0,5	-	-	-	3,0	4,0	-	-	10,0	-	-	1,5	10,0	10,0	3,0
ՀՈՒՆԱՍՏԱՆ	10,0	16,5	11,0	-	11,0	-	14,0	-	6,0	14,0	10,0	10,0	16,0	15,0	-	25,0	15,0	15,0	14,0
ՖՐԱՆՍԻԱ	130,0	125,0	200,0	200,0	175,0	-	300,0	250,0	300,0	300,0	180,0	200,0	350,0	300,0	300,0	300,0	350,0	350,0	250,0
ԹՈՒՐՔԻԱ	200,0	105,0	250,0	150,0	125,0	130,0	180,0	200,0	80,0	200,0	100,0	100,0	60,0	80,0	50,0	60,0	65,0	65,0	150,0[2]
ԻՐԱՆ	140,0	130,0	200,0	200,0	190,0	190,0	220,0	280,0	200,0	280,0	260,0	200,0	150,0	150,0	200,0	200,0	220,0	208,0	200,0
ԻՐԱՔ	20,0	25,25	30,0	25,0	16,0	25,0	20,0	-	15,0	20,0	30,0	-	-	15,0	30,0	16,0	20,0	22,0	20,0
ԼԻԲԱՆԱՆ	120,0	115,0	180,0	180,0	180,0	160,0	285,0	285,0	250,0	250,0	160,0	-	200,0	250,0	250,0	150,0	250,0	250,0	150,0
ՍԻՐԻԱ	150,0	115,0	150,0	150,0	135,0	180,0	120,0	120,0	120,0	120,0	180,0	-	100,0	-	160,0	130,0	120,0	120,0	120,0
ՔՈՒՎԵՅԹ	-	-	7,0	-	7,0	6,0	10,0	-	8,0	12,0	6,0	-	12,0	-	-	8,0	11,0	11,0	10,0
ԵԳԻՊՏՈՍ	45,0	38,0	22,0	25,0	15,0	-	25,0	-	25,0	25,0	50,0[2]	-	20,0	15,0	25,0	16,0	12,0	12,0	15,0
ԱՄՆ	250,0	200,0	450,0	45,0[2]	400,0	-	550,0	650,0	550,0	650,0	500,0	800,0	600,0	600,0	600,0	750,0	800,0	700,0	650,0
ԱՐԳԵՆՏԻՆԱ	40,0	60,0	70,0	60,0	45,0	-	80,0	10,0[2]	80,0	80,0	-	-	-	30,0	80,0	50,0	85,0	85,0	70,0
ԲՐԱԶԻԼԻԱ	12,0	15,0	27,0	-	15,0	-	20,0	-	-	20,0	10,0	-	-	20,0	-	17,0	20,0	20,0	20,0
ԿԱՆԱԴԱ	4,0	-	-	-	15,0	-	50,0	50,0	35,0	50,0	20,0	30,0	100,0[2]	50,0	-	45,0	70,0	70,0	21,0[2]
ՈՒՐՈՒԳՎԱՅ	-	40,2[2]	15,0	-	15,0	-	16,0	-	12,0	16,0	-	-	-	-	-	14,0	14,0	14,0	14,0
ԱՎՍՏՐԱԼԻԱ	-		15,0	-	7,5	-	20,0	-	15,0	20,0	-	25,0	-	-	-	30,0	30,0	30,0	15,0
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ /ՄԻԼԻՈՆ ՀՈԳՈՎ/	1,2	1,1	1,9	1,8	1,4	-	2,0	2,5	2,0	2,6	1,6	2,0	1,7	1,6	1,7	2,0	2,2	2,1	1,8

13. Իսրայել	— 9	աղբյուր	23. Եգիպտոս	—14	աղբյուր
14. Իրան	—18	»	24. Եթովպիա	— 9	»
15. Իրաք	—14	»	25. Սուդան	— 8	»
16. Լիբանան	—18	»	26. ԱՄՆ	—18	»
17. Կիպրոս	—11	»	27. Արգենտինա	—14	»
18. Հնդկաստան	— 7	»	28. Բրազիլիա	—11	»
19. Հորդանան	—10	»	29. Կանադա	—12	»
20. Սինգապուր	— 5	»	30. Վենեսուելա	— 6	»
21. Սիրիա	—16	»	31. Ուրուգվայ	— 9	»
22. Քուվեյթ	—10	»	32. Ավստրալիա	—10	»

Ըստ այդ աղբյուրների, թվարկված 32 երկրներից հետևյալներում ներկայումս բնակվում են 10.000 և ավելի հայեր. Եվրոպայում՝ Անգլիա, Բուլղարիա, ԳՖՀ, Հունաստան, Ֆրանսիա, Ասիայում՝ Թուրքիա, Իրան, Իրաք, Լիբանան, Սիրիա, Քուվեյթ, Աֆրիկայում՝ Եգիպտոս, Ամերիկայում՝ ԱՄՆ, Արգենտինա, Բրազիլիա, Կանադա, Ուրուգվայ, ինչպես նաև Ավստրալիայում։

Քանի որ այս 18 երկրներում ապրում է սփյուռքահայության ավելի քան 90%-ը, ստորև բերվող համեմատական աղյուսակում ընդգրկված են հենց այդ երկրների հայկական համայնքների թվական կազմին վերաբերող տվյալները, չնայած որ մեր ձեռքի տակ տեղեկություններ կան աշխարհի 84 երկրների մեծ ու փոքր հայկական համայնքների թվաքանակի մասին[2],

Աղյուսակում բերված տվյալների[3], ինչպես նա սփյուռքահայ մամուլի վերջին տարիների բազմաթիվ հաղորդումների վերլուծությունից կարելի է հանգել այն հաստատ եզրակացությանը, որ ուսումնասիրվող 18 երկրների հայկական համայնքները պատկանում են հետևյալ 3 հիմնական խմբերին.

1. Համայնքներ, որոնց թվաքանակը վերջին 25 տարում սիստեմատիկորեն ու հետևողականորեն նվազում է։ Դրանց թվին պատկանում են Եգիպտոսի, Լիբանանի[4], Իրանի, Թուրքիայի, Իրաքի հայկական համայնքները։ Այս երկրներից հայերի հեռանալու հիմնական պատճառները տարբեր տարիներում՝ ներքաղաքական անկայուն վիճակն է և պատերազմական գործողությունները։

2. Համայնքներ, որոնք շարունակական թվական աճի տենդենց ունեն։ Դրանք են. Եվրոպայում՝ Անգլիայի, ԳՖՀ-ի, Ֆրանսիայի, Ասիայում՝ Քուվեյթի, Ամերիկայում՝ ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բրազիլիայի և Կանադայի, ինչպես նաև Ավստրալիայի հայկական համայնքները։ Մերձավոր և Միջին արևելքից հեռացող հայերի մեծագույն մասը հենց այս երկրներում է հանգրվանում, այնտեղ որոնելով համեմատաբար ապահով կյանքի հնարավորություններ։

3. Համայնքներ, որոնց թվաքանակը այդ տարիների ընթացքում էական, բախտորոշ փոփոխությունների չի ենթարկվել։ Դրանք են՝ Բուլղարիայի, Հունաստանի, Սիրիայի և Ուրուգվայի հայկական համայնքները։ Հարկ է նշել, որ հիմնականում այս խմբի մեջ է մտնում նաև ավելի փոքրաքանակ (10.000 մարդուց պակաս) համայնքների մեծ մասը։

Բերված տվյալները նաև խոսում են այն մասին, որ անցած քառորդ դարի ընթացքում սփյուռքահայության ընդհանուր թիվը ավելացել է ավելի քան 1 միլիոնով։ Հատուկ աշխատություն է պահանջում այն հարցը, թե այդ երևույթը միայն բնական աճի՞ հետևանք է, թե՞ մենք գործ ունենք նաև այլ, դեռևս չուսումնասիրված պրոցեսների հետ։

---

2 Նույն տեղում։

3 Աղյուսակի առաջին տողում նշված են աղբյուրների հրատարակման տարեթվերը։ Բերված են նաև հետևյալ ծանոթագրությունները. 1) բոլոր թվերը, բացի վերջին տողի թվերից, տրված են հազարներով։ 2) Այս թվերը անհավանական կամ կասկածելի են։ 3) Ս. Ի. Բրուկի գրքի առաջին հրատարակության տվյալները վերաբերում են 1979 թ., իսկ երկրորդ հրատարակությանը՝ 1983 թ.։ Մեր կարծիքով, Բրուկի բոլոր տվյալները փոքրացված են։

4 1988 թ. տվյալներով լիբանանահայության թիվը մոտ 105 հազար է։

ДИНАМИКА ЧИСЛЕННОСТИ НАСЕЛЕНИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В 1962—86 гг.

А. М. ВОСКАНЯН

Резюме

Изучение и анализ опубликованных в научной и периодической печати данных о численном составе зарубежных армян в 1962—1986 гг. приводит к выводу, что в 18 зарубежных странах из 84, в которых проживают армяне, их больше, чем по 10 тысяч человек. Этими странами являются: в Европе—Англия, Болгария, Греция, Франция, ФРГ; в Азии—Ирак, Иран, Кувейт, Ливан, Сирия, Турция; в Африке—Арабская Республика Египет; в Америке—Аргентина, Бразилия, Канада, США, Уругвай, а также Австралия. В этих странах в настоящее время проживает более 90% всех зарубежных армян.

Армянские общины этих 18 стран делятся на следующие 3 основные группы:

1. Общины, численный состав которых за последние 25 лет систематически и последовательно сокращался. В эту группу входят армянские общины АРЕ, Ливана, Ирана, Ирака и Турции. Основной причиной ухода армян из этих стран являются неустойчивое внутреннее состояние этих стран в разные годы и обстоятельства, связанные с военными действиями.

2. Общины, в которых наблюдается тенденция постоянного численного роста. К их числу относятся армянские общины Англии, ФРГ, Франции, Кувейта, США, Аргентины, Бразилии, Канады, Австралии. Большая часть армян, уходящих из ближневосточных стран, концентрируется именно в этих странах.

3. Общины, численный состав которых за изучаемый период мало изменился (Болгарская, Греческая, Сирийская, Уругвайская армянские общины). В эту же группу входит большинство армянских зарубежных общин с численностью менее чем 10.000 человек.

Из приведенных в таблице данных видно, что общее количество армян за рубежом за прошедшие четверть века увеличилось почти на 1 миллион человек. Необходимо провести специальное исследование для того, чтобы выяснить, является ли это результатом лишь естественного прироста или имевших место других, еще не изученных процессов.